ԵՐԿՈՒ ՓԱՍՏ Մ. ՄԵԾԱՐԵՆՑԻ ՄԱՍԻՆ

Ա. Ս. ՇԱՐՈՒՐՅԱՆ

Միսաք Մեծարենցին նվիրված գրեթե բոլոր մենագրություններում ու հոդվածներում շատ է խոսվել նրա բանաստեղծությունների հարուցած կրքոտ վիճաբանությունների մասին, որոնց մասնակցել է նաև ինքը՝ հեղինակը։ Այդ վիճաբանությունների առիթով արծարծվել են թե՛ գրական-գեղագիտական և թե՛ բարոյագիտական խնդիրներ (շատ կողմերով անբարյացակամ ու թշնամական քննադատությունը հաճախ է դուրս եկել պատշաճության սահմաններից)։

Անշուշտ, Մեծարենցի ստեղծագործության շուրջը ծավալված գրապայքարի խնդիրը արժանի է հատուկ ուսումնասիրության, քանի որ այն հնարավորություն կտա առավել համակողմանի պատկերացում կազմել ինչպես գրողի գործունեության, այնպես էլ ժամանակի գրական բարքերի ու քննադատության մասին։ Ներկա հոդվածում, չհետապնդելով այդպիսի խնդիր, ուզում ենք ընթերցողի ուշադրությանը ներկայացնել երկու հետաքրքիր փաստ միայն, որոնք հետաղոտողներին մնացել են անծանոթ։

Ա

Հայտնի է, որ Մեծարենցն սկսել է ստեղծագործել 1901 թ., իսկ նրա տաղերն առաջին անգամ հրատարակվեցին 1903 թ. Կ. Պոլսի «Հանրագիտակ», «Մաղիկ» և «Մասիս» պարբերականներում։ Բայց հետաքրքիր է, որ մինչև տպագրվելը, մինչև քերթվածներով հասարակությանը ներկայանալը Մեծարենցի գրական ճակատագիրը դասավորվեց այնպես, որ նա անուղղակիորեն քննադատվեց պարբերական մամուլում։

Այդ մասին իմանում ենք բանաստեղծի մանկության ընկերոջ՝ Վահան Արսլանյանի հուշերից։ Նա պատմում է, որ ծանոթ լինելով Միսաքի տաղերին և գնահատելով դրանք, հորդորել է նրան մասնակցելու «Մասիսի» հայտարարած մրցույթին, բայց Միսաքը հրաժարվել է։ «Այն ատեն,— գրում է Վ. Արսլանյանը,— մտերմորեն ինծի վստահված ոտանավորներեն (Մեծարենցի— Ա. Շ.) մեկ քանին ընդօրինակելով, փորձվեցա ղրկելու մրցումին իմ կողմեն ստորագրված հարակից նամակով մը, որուն մեջ քանի մը կենսագրական գիծեր ու մանրամասներ կուտայի Մեծարենցի այդ օրերու կյանքեն. «Հերիք որքան ինք իր մեջ հուզեցավ ու հուզեց իր մտերիմները» կը վճռեի այդ նամակիս մեջ, տողընդմեջ ավելացնելով. «Կարծելս կուգա, թե այդ քերթվածները գրված են իր պաշտոնավարած վաճառատան[1] հաշվու և թուղթերու քամա-

---

[1] *Մարզվանի Անաթոլիա կոլեջի նախապատրաստական դասընթացն ավարտելուց հետո Մեծարենցը 1901 թ. վերադարձել է Սվազ և եղբոր ու հորեղբորորդու հետ մեկ տարուց ավելի զբաղվել առևտրով (Թորոս Մ. Ազատյան, Միսաք Մեծարենց (իր կյանքը), հատոր առաջին, 1922, Կ. Պոլիս, էջ 12)։*

կը, թե ան դեռևս 16 տարեկան է այս քերթվածները թողած ատենը ու դեռ այս կարգի միամիտ արտահայտություններ»[2]։

Եվ ահա 1902 թ. օգոստոսին «Մասիսում» լույս է տեսնում Տիգրան Արփիարյանի (Տ. Ա.) «Գրական ծյուրախտ» հոդվածը, որտեղ հեղինակը համեբաշխելով «Արևելքում» հրապարակված համանուն խորագրով խորհրդածություններին, իր մտահոգությունն էր հայտնում երիտասարդության գրական հրապուրանքների առթիվ, խորհուրդ էր տալիս սթափվել ու զգուշանալ բանաստեղծելու և տպագրվելու հիվանդությունից։ Հոդվածում մասնավորաբար կարդում ենք. «... Անանկներ ալ կան, որոնք իբր թե իրենք չեն փափագիր իրենց ոտանավորներուն հրատարակությունը և բարեկամ մը՝ ձեռքերնուն խլելով՝ կը ղրկե այս կամ այն թերթի խմբագրության։ Գրվածքը ավելի հարգի ու ավելի անույշ ցուցնելու հնա՞րք մըն է արդյոք այս միջոցը, թե ոչ անկեղծ բան մը, դժվար է ճշտելը։ Ամեն պարագայի մեջ, գործադրության եղանակը շա՛տ ողորմելի է. դատեցե՛ք սա նմուշեն։ Դավառացի Պարոն մըն է գրողը, իբրև ցանկացող իր մեկ բարեկամին բանաստեղծությանց հրատարակման։

Ներփակ պիտի գտնեք բարեկամիս՝ Պ... ի երկու ոտանավորները, որոնք կարծեմ գեղազանցապես գեղեցիկ ու հաջողակ պիտի նկատվին, երբ գիտանալու ըլլաք, թե խնդիրը պարզապես 16 տարեկան պարոնի մը կը դառնա։ Ա՛լ հերիք որչափ ինք իր մեջ հալվեցավ ու հուզմունքը պատկերացուց ոտանավորներու տողանցումին մեջ ու միայն իմ մեջս. ա՛լ հերիք որքան սրտի ցավեր կրեց ու իր ցավերը պոռթկացուց ոտանավորներու մեջ։ Հիմա դանե իմ խորհելակերպովս թող ինք լույս ելնե, հուզվի ու հուզե։

Նամակագիրը թանկագին ծանոթություն մը կուտա իր նամակին վերջը, ավելացնելով, թե «Պ... վաճառականությամբ կը զբաղի հիմա և այս ոտանավորները կարծելս կուգա թե հաշվեցուցակի թուղթերու կռնակը գրված են։

Տասնըվեց տարեկան պատանի մը վաճառական և վաճառական բանաստե՞ղծ է։ Տեսակին մեջ եզակա՞ն չեք գտներ այս նմուշը։

Խեղճ տղաքներ»[3]։

Արսլանյանի՝ վերը բերված տողերը տարակույս չեն թողնում, որ «վաճառական բանաստեղծը» Մեծարենցն է, որ Արփիարյանի ավելի քան թափանցիկ ակնարկը, ինչպես վկայում է հուշերի հեղինակը, շատ է վշտացրել Միսաքին, բայց նա այդ մասին որևէ խոսք չի ասել ընկերոջը։ Իսկ վերջինս հարկ է համարել նշել. «Արդար ըլլալու համար պետք է կրկին տարիներե ետքը խոստովանիմ, թե Միսաք լուր չուներ այս ընթացքես, որովհետև իր հավանությունը առած չէի իրեն անակնկալ մ՚ընելու բաղձանքով»[4]։

Բ

1908 թ. «Արևելյան մամուլ» հանդեսի հավելվածում (Ա. եռամսյա) տպագրվեց Մեծարենցի «Անտիպ բանաստեղծ մը» հոդվածը, որ գրողի վերջին ելույթներից է։ Նախորդ տարիներին հրատարակված չափածո ու արձակ քերթ-

---

2 Վահան Արսլանյան, Միսաք Մեծարենց (գիծեր իր կյանքեն), գրականության և արվեստի թանգարան, Մեծարենցի ֆոնդ, 313/5, էջ 80—81։ Այս հուշերի առանձին հատվածներ լույս են տեսել սփյուռքահայ մամուլում, բայց ամբողջությամբ անտիպ են։

3 «Մասիս», 1902, № 33, էջ 521։

4 Վահան Արսլանյան, նշվ. աշխ., էջ 82։

վածները, հոդվածները և առաջին հերթին «Միածան» ու «Նոր տաղեր» ժողովածուները (1907) լայն ճանաչում էին բերել նրան, հանգամանք, որ խոստովանում էին շատ գրախոսներ։ Բայց միաժամանակ հենց այդ ժողովածուների, ինչպես և դրանցից հետո մամուլում լույս տեսած մի քանի տաղերի դեմ էր, որ Մեծարենցի գրական հակառակորդները կազմակերպեցին իսկական խաչակրաց արշավանք։

Տակավին չէին լռել Մեծարենցի բանաստեղծությունների դեմ բորբոքված վեճերը, երբ նրա հիշյալ հոդվածի դեմ հանդես եկավ Միհրան Ուղուրլյանը։ «Անտիպ բանաստեղծ մը» հոդվածը նվիրված էր Մեծարենցի մտերիմներից մեկին՝ Վահրամ Թաթուլին, որ թեև գրքի հեղինակ չէր (այս իմաստով էլ «անտիպ»), բայց մամուլում երբեմն-երբեմն հրապարակվում էին նրա չափածո գրական փորձերն ու քննադատական հոդվածները։ Մասնավորապես 1908 թ. փետրվար-մարտ ամիսներին «Բանաստեղծ մը և բանաստեղծություն» խորագրով ծավալուն գրախոսականում Վ. Թաթուլը ոչ միայն ժխտում էր Մերուժան Պարսամյանի «Պատրանքի ծաղիկներ» ժողովածուի գրական արժեքը՝ հեղինակին համարելով «հասարակ ու հետևակ բանաստեղծ», «ոտանավորի անմրցելի մեքենա», այլև պաշտպանում էր Մեծարենցին Ենովք Արմենի հարձակումներից[5]։

Հարկավ, Վ. Թաթուլի հետ ունեցած անձնական ու գրական մտերմությունը իր կնիքն է դրել Մեծարենցի հոդվածի վրա։ Դրանով պետք է բացատրել նրա ակներևորեն չափազանցված գովասանքները («Նորանշան բանաստեղծ մը», «Լիովին բանաստեղծ» և այլն)։ Դրա հետ մեկտեղ չի կարելի չնկատել, որ Մեծարենցը անում է որոշ դիտողություններ՝ հույս հայտնելով, թե Վ. Թաթուլը «ճշմարիտ աստիճանի վրա պիտի գտնվի», պետք է հասնի իր «գաղափարականին»[6]։ Ավելի գնահատելի է այն պարագան, որ թեև հոդվածը Վ. Թաթուլի մասին է, բայց այնտեղ առաջադրված են խիստ հետաքրքիր կարծիքներ սիմվոլիզմի, ժողովրդայնության և գրական այլուայլ խնդիրների շուրջը։ Հասու չլինելով այդ ամենին և ըստ Էության ձայնակցելով աչառու քննադատներին, Մ. Ուղուրլյանը «Գրական ճոխ փունջի մը հանդեպ («Ա. մամուլ»-ի Ա եռամսյային առիթով)» գրախոսականում Մեծարենցի հոդվածը որակում էր սոսկ որպես «կանխահաս հոգնություն մը» և «ծիծաղաշարժ կատակերգություն»։ «Ի՞նչ անհամբերություն,— գրում է նա,— մանավանդ թե ի՞նչ աճապարանք է աս։ Բոլոր այդ խանդաղատալից շարժուձևերը, այդ ներողամիտ, փայփայիչ սիրաշահումները, այդ ընկերսիրական չափազանց սրտազեղ պոռթկումները և նրբահույս ներբողները ինչի՞ համար»[7]։

Մեծարենցը չարձագանքեց այս քննադատությանը։ «Քննադատ մըն ալ» պատասխանով հանդես եկավ Վ. Թաթուլը[8]։ Նա փորձեց պաշտպանել Մեծարենցի հոդվածից Մ. Ուղուրլյանի քաղած ու ծաղրած օրինակները և կասկածի տակ առավ գրախոսի գրական ունակությունները (վերջինս նույնպես պարբերականներում տպագրում էր չափածո ու արձակ մի քանի գործեր)։ Սրան հետևեց Մ. Ուղուրլյանի «Կարճ պատասխան մը» ելույթը, որտեղ Վ. Թաթուլին

---

5 «Բյուզանդիոն», Կ. Պոլիս, 1908, №№ 3464, 3470 և 3476։

6 Մ ի ս ա ք Մ ե ծ ա ր ե ն ց, Երկերի ժողովածու, Երևան, 1956, էջ 291, 295։

7 Տե՛ս «Արևելյան մամուլ», Իզմիր, 1908, № 18, էջ 410, 411։

8 Նույն տեղում, № 22, էջ 522—524։

ուղղված հետևյալ խոսքերի մեջ առանց անունը տալու դարձյալ կշտամբվում էր Մեծարենցը։

«Դուք կրնաք ուզածնուդ չափ ձեր ծանոթ հենարանին կրթնիլ ու սոնքալ։ Ամեն պարագայի մեջ, իմ գրական համեստ անունը պետք չունի ուրիշներու շնորհիվ ծանոթացվելու։ Մնաց որ իմ նկարագիրս ու դավանանքս հայտնի են արդեն, ես անոնցմե չեմ, որոնք իրենց գրիչը ստրկորեն ի սպաս կը դնեն ենթադրական կամ վիճելի արժանիքներու պանծացումին։ Չհավնեցա՞ք պարոն իմ հիշած հերոսիս»[9]։

Այս պատասխանը տպագրվեց հունիսի 10-ին, իսկ 12 օր անց (հին տոմարով) «հիվանդ, հանճարեղ պատանին» արդեն կենդանի չէր։

ДВА ФАКТА О М. МЕЦАРЕНЦЕ

А. С. ШАРУРЯН

Резюме

Известно, что творчество великого армянского поэта Мисака Мецаренца (1886—1908) вызвало бурную полемику, в которой принимал участие и сам писатель.

Приведенные в сообщении новые факты обогащают наши сведения об этой полемике, способствуя более глубокому изучению некоторых проблем деятельности М. Мецаренца.

---

9 Նույն տեղում, № 24, էջ 575։